

Ինտերնետային առևտրի ՄԻ ՔԱՆԻ ԿԱՆՈՆ, որոնք կօգնեն խուսափել համացանցում զեղծարար կայքերից

- Համացանցում գնումներ կատարեք միայն վստահելի խանութներից;
- Գնում կատարելուց առաջ կարդացեք կարծիքներ խանութի մասին (գրելով կայքի հասցեն + կարծիքներ);
- Համոզվեք, որ կայքը գրանցվել է ոչ պակաս քան մեկ տարի առաջ: Առաջարկում ենք ստուգել կայքի գրանցման վաղեմությունը <https://www.nic.ru/whois/> կայքի միջոցով;
- Կայքում պետք է գրանցված լինեն խանութի կոնտակտային տվյալները՝ հասցե, հեռախոսի համար, էլեկտրոնային հասցե, ապրանքի առաքման և հետվերադարձի մանրամասնատեղեկություն;
- Խոշոր գնումներ կատարելիս ցանկալի է նախապես կապ հաստատել խանութի հետ;
- Հավատացեք միայն խելամիտ զեղչերին;
- Ուշադրություն դարձրեք կայքի հասցեին, շատ հաճախ զեղծարարները փոփոխում են իրական կայքերի անվան մեջ մեկ-երկու տառ;
- Գնումներ կատարեք միայն պաշտպանված կայքերից, որոնց հասցեն պետք է սկսվի **https** տառերով: